Երկրորդ ընթերցում

Պ-135-14.01.2022,25.02.2022-ՊԱ-011

<u>ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, կամ որն ընտանիքի միակ արու զավակն է և ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:»

2)լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.
«7.Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք ունեցող քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:»

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից «պաշտպանության մարտական գործողությունների կամ» բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 2-րդ կետը լրացնել «դ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«դ. շարքային կազմի պարտադիր զինծառայողները՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում:»

2)լրացնել նոր 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.
«6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետում սահմանված իրավունքը չի տարածվում սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:»

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, ~~3~~ կամ որն ընտանիքի միակ արու զավակն է եւ ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:»

2)լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.
«7.Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք ունեցող քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:»

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից «պաշտպանության մարտական գործողությունների կամ» բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 2-րդ կետը լրացնել «դ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«դ. շարքային կազմի պարտադիր զինծառայողները՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում:»

2)լրացնել նոր 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.
«6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետում սահմանված իրավունքը չի տարածվում սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:»

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Պ-135-14.01.2022-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀԵՂԻՆԱԿ	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի նախագծի (Պ-135-14.01.2022-ՊԱ-011/1) (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում՝	«լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով:		Ընդունվել է

ՀԵՂԻՆԱԿ	«Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.	«7.Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք ունեցող քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության։»		Ընդունվել է
ՀԵՂԻՆԱԿ	Օրենքի 29-րդ հոդվածում՝լրացնել նոր 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.	«6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետում սահմանված իրավունքը չի տարածվում սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա։»		Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«կամ» շաղկապից առաջ նշված «3» թիվը հանել:		Ընդունվել է
Աժ պատգամավոր Թագուհի Թովմասյան	1.Նախագծի 1-ին հոդվածում՝	«3) ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, կամ որն ընտանիքի միակ արու զավակն է և ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:» **բառերը հանել նախագծից:**	Չի ընդունվել	Չի ընդունվել

ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյան	Նախագծի 1-ին հոդված՝	շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4-րդ կետով. «4) ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ ստորաբաժանումներում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) եղբայր:»	Չի ընդունվել	
«Պատիվ ունեմ» խմբակցություն	Նախագծի 1-ին հոդված.	**«Հոդված 1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածում՝ • 1-ին մասի «5-րդ մասում» բառերը փոխարինել «5-րդ և 5.1.-րդ մասերում» բառերով, • լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1. մասով. «5.1. Շարքային կազմի այն պարտադիր զինծառայողը, ով ունի Հայաստանի Հանրապետության	Չի ընդունվել	Չի ընդունվել

		պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, կամ որն ընտանիքի միակ արու զավակն է և ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով զինվորական ծառայության է անցնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումներում:»		

«Հայաստան» խմբակցություն	Օրենքի 29-րդ հոդվածը լրացնել 6-րդ կետով.	1.Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, մարտական գործողությունների ընթացքում զոհվածի եղբայրը (եղբայրները) և որդին (որդիները) պարտադիր զինվորական ծառայությունն անցնում են ուսումնական գումարտակում՝ կես տարի (6 ամիս) ժամկետով կամ թիկունքային ոչ մարտական ստորաբաժանումներում: Ուսումնական գումարտակում ծառայությունն ավարտելուց հետո, ցանկության դեպքում, սեփական դիմումի առկայության դեպքում կարող են զինվորական ծառայությունը շարունակել ՀՀ Զինված ուժերում՝ թիկունքային ոչ մարտական ստորաբաժանումներում: 2.Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհվածի միակ եղբայրը կամ զավակը, ևս ցանկության դեպքում, իրավունք ունի ծառայությունն անցնել առաջին կետով սահմանված կարգով:	Չի ընդունվել	Չի ընդունվել